Յուլիա Մկրտչյան
Երևան Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան
մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ

ԾՆՈՂՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Անձի ձևավորումը բավականին բարդ գործընթաց է, որը դիտարկվում է ծնողական վերաբերմունքի, ազդեցության և գործողությունների պրիզմայով: Կրթության բնագավառի մասնագետները իրազեկությունը մեծապես դիտարկել են որպես անձի իրացման և բավարարման հենքային հմտություն անձնական և սոցիալական կյանքի ոլորտներում: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ծնողներին խիստ անհրաժեշտ է մանկավարժական կրթություն: Այս առումով շեշտադրվում են ծնողներին ուղղված ծրագրերը, որոնք նպատակադրված են բարձրացնելու ծնողների կրթական իրազեկության մակարդակը:

Հիմնաբառեր. ծնողների մանկավարժական իրազեկություն, լուսավորություն, ներգրավվածություն, ընտանիք, դաստիարակություն, կրթություն:

Մարդու հիմնական առանձնահատկությունները, հասարակական պատկերը ձևավորվում են ամենավաղ տարիքում, երբ երեխան կյանքի առաջին քայլերն է անում ծնողների հսկողության ներքո՝ շրջապատված մոր և հոր հոգատարությամբ և սիրով: Ընտանիքը՝ որպես հասարակության սկզբնական բջիջ, երեխայի դաստիարակության հիմնական և առաջնային պատասխանատուն է: Դաստիարակության գործընթացը պահանջում է ծնողների անհրաժեշտ հետևողականություն և ամենօրյա հսկողություն երեխաների արարքների նկատմամբ: Դարեր շարունակ ծնողները եղել և շարունակում են մնալ երեխաների կրթության և զարգացման հենքային կրողները: Ծնողներն են պատասխանատու երեխաների ճիշտ ձևավորման, զարգացման և կրթության համար: Ժամանակակից կրթության տեսության և պրակտիկայի աճող պահանջներին զուգընթաց ծնողների մանկավարժական լուսավորության հարցի ուսումնասիրության հրատապությունը և արդիականությունը պետք է դարձնել թիրախային հենց մանկավարժական հետազոտությունների համատեքստում: Ուստի ժամանակակից աշխարհում նախավարժությունը և ծնողների մանկավարժական իրազեկության զարգացումը շատ կարևոր նախապայման է ճիշտ դաստիարակություն իրականացնելու համար:

Դեռևս 17-րդ դարում շատ գիտնականներ են պնդել, որ երեխայի վաղ զարգացման առաջին հինգից վեց տարվա կյանքը ամենակարևորն է աճող մարդու համար: Ամերիկացի բժիշկ Գջլեն Դումանը գտնում է, որ մարդկային ուղեղի ձևավորումը տեղի է ունենում կյանքի առաջին տարիներին. հինգ տարեկան երեխայի մեջ այս գործընթացը ավարտվում է 80 տոկոսով, իսկ ութ տարեկան հասակում ուղեղը գրեթե ամբողջությամբ ձևավորված է լինում:[1]

Մանկաբույժ Ա.Ֆ. Տուրը պնդում էր, որ մինչև հինգ տարեկան երեխան պետք է անպատճառ դաստիարակվի ընտանիքում: Ըստ վերջինիս՝ ուսուցիչները սահմանել

[1] http://kladraz.ru/metodika/metodiki-ranego-obuchenija-detei-matematike.html:

են հետևյալ օրինաչափությունները. «Անձի ձևավորման հաջողությունը նախ և առաջ պայմանավորում է ընտանիքը: Որքան «լավն է այն, այնքան ավելի լավ է այն ազդում երեխայի դաստիարակության վրա, այնքան ավելի բարձր է անհատի ֆիզիկական, բարոյական և աշխատանքային դաստիարակության մակարդակը»: Ընտանիքը և երեխան միմյանց արտապատկերումն են: Ընտանիքի ազդեցությունը աճող երեխայի վրա ավելի ուժեղ է, քան բոլոր մյուս կրթական և դաստիարակչական ազդեցությունները: Վ.Ա. Կուզմինսկու խորին համոզմամբ մարդկային սիրո դաստիարակչական ուժը մարդ-մարդ հարաբերություններում միմյանց նկատմամբ ունեցած պարտավորության գեղեցկությունն է. «…միայն այնտեղ, որտեղ հայրը զբաղվում է իր սեփական դաստիարակությամբ, առաջանում է երեխայի ինքնադաստիարակության ձգտումը: Երեխան ձգտում է լավը լինել՝ տեսնելով իդեալականը»:[2]

Անձի ձևավորումը բավականին բարդ գործընթաց է, որը դիտարկվում է ծնողական վերաբերմունքի, ազդեցության և գործողությունների պրիզմայով: Կրթության բնագավառի մասնագետները իրազեկությունը մեծապես դիտարկել են որպես անձի իրացման և բավարարման հենքային հմտություն անձնական և սոցիալական կյանքի ոլորտներում: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ծնողներին խիստ անհրաժեշտ է մանկավարժական կրթություն: Այս առումով շեշտադրվում են ծնողներին ուղղված ծրագրերը, որոնք նպատակադրված են բարձրացնելու ծնողների կրթական իրազեկության մակարդակը: Ծնողներն ու ուսուցիչները էական դերակատարություն ունեն փոքր տարիքային խմբի երեխաների կրթական ծրագրերի մշակման և, որ ամենակարևորն է, կիրարկման գործընթացում: Ծնողը երեխայի առաջնային խնամքն ապահովողն է և նրա տիեզերքի սրտի կենտրոնական կերպարը:[3] Ծնողն է երեխայի առաջնային օժանդակողը ֆորմալ կրթության փուլ անցում կատարելու գործընթացում: Շատ փորձագետներ նշում են, որ ծնողները կարող են ցուցաբերել այնպիսի հմտություններ, տաղանդներ ու հետաքրքրություններ, որոնք էապես կնպաստեն ուսումնական ծրագրին, անկախ այն բանից, թե որքան ստեղծագործ ու հնարամիտ են այդ երեխաների մանկավարժները:[4] Ցանկացած խնդիր, մտահոգություն կամ ուսումնական նպատակ ներառում է երեխայի ընտանիքը՝ անմասն չթողնելով ծնողներին: Հետևապես կյանքի ոչ մի փուլում երեխային հնարավոր չէ տարանջատել ընտանիքից, քանի որ վերջինս ընտանեկան մշակույթում է սոցիալականացվում: Նույնիսկ մանկական հաստատություններում դաստիարակվող երեխաները այդ հաստատության ավանդույթներն ու մշակույթը կրողն են դառնում:

Հայ գիտական իրականության մեջ դժվար է գտնել որևէ ծրագիր՝ ուղղված ծնողների մանկավարժական իրազեկությանն ու լուսավորությանը: Գործում են մի շարք հասարակական կազմակերպություններ, որոնք աջակցություն են ցուցաբերում խոցելի ընտանիքներին, կազմակերպում են կրթական դասընթացներ՝ ծնողներին որոշակիորեն իրազեկելու նպատակով: Սակայն շատ քիչ ծնողներ են գիտակցում, որ

[2] Василий Сухомлинский , Родительская педагогика Питер 2017, стр. 7:

[3] Quality Teaching: Early Foundations Best Evidence Synthesis Prepared for the Ministry of Education by Sarah-Eve Farquhar Childforum Research Network PO Box 58-078, Wellington, 2003 https://www.educationcounts.govt.nz/__data/assets/pdf_file/0003/7707/bes-quality-teaching-early.pdf (01.07.2018):

[4] Lee, V.E., Bryk, A. & Smith, L. (1990). High school organization and its effects on teachers and students: An interpretive summary of the research. In Clune, W. H. & Witte, J.F. (Eds.). Choice and control in American education volume 1: The theory of choice and control in education, pp. 135-227, New York: Falmer:

իրենք իրազեկման կարիք ունեն: Ծնողների մեծ մասը գտնում է, որ բնությունից տրված ծնողական բնազդը բավական է երեխայի անձի դաստիարակության համար: 2010 թ. ՀՀ-ում «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամն իրականացրել է «Նախապատրաստում դպրոցին» (4-6 տարեկանների համար) հետազոտությունը ծնողների մանկավարժական կրթության ազդեցությունը նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման վրա: Թիրախային խմբից մոտավորապես 1700 ծնող մասնակցել է ծնողական կենտրոնների վերապատրաստումներին: Նախագիծն իր դրական ազդեցությունն է ունեցել սոցիալապես անապահով մոտ 3400 երեխաների զարգացման բարելավման վրա: Յուրաքանչյուր կենտրոն շուրջ 10 ամիս աշխատել է ծնողների հետ, այնուհետև, 2009 թվականին Բաց հասարակության ինստիտուտը իրականացրել է այդ նախագծի գնահատում՝ դրական փոփոխությունների ակնկալիքով: Արդյունքում նախագծին մասնակցող ծնողներից 70-ը Հայաստանի տարբեր շրջաններից վերապատրաստել են իրենց շրջանների մյուս ծնողներին, ստեղծվել են ծնողների իրազեկության բազմաթիվ նյութեր և էլեկտրոնային բազա:[5]

Ծնողների մանկավարժական լուսավորության համատեքստում ժամանակակից մանկավարժական տեսությունները շատ հաճախ են մեջբերում «*ծնողների ներգրավվածություն*» եզրույթը: Ծնողների ներգրավվածությունը կազմակերպվում է երկու ձևով՝ ծնողական ներգրավվածություն դպրոցում և ծնողական ներգրավվածություն տանը, ընտանիքում:[6] Առաջինը ենթադրում է դասարանական մասնակցություն, մասնակցություն հասարակական և ծառայությունների մատուցման ոլորտն ընդգրկող իրադարձություններին, մասնակցություն ծնողական և դպրոցական խորհրդի ժողովներին: «Տուն-ընտանիք» կենտրոնացումն ունեցող ծնողական ներգրավվածությունը ենթադրում է աշխատանքներ անմիջապես երեխայի հետ, ինչպիսիք են աջակցություն տնային հանձնարարությունները կատարելու գործընթացում, երեխային առողջ սննդով և առողջապահությամբ ապահովում և պարբերաբար ուսուցչի հետ անհատական հանդիպումներ: Հետազոտություն է անցկացվել ծնողների ներգրավվածության շուրջ, որի նպատակն է եղել հասկանալ, թե որքանով են ծնողներն իրենց համարում ներգրավված տանը և դպրոցում: Շատ հետազոտողներ փորձել են դասակարգել ծնողական ներգրավվածությունը: Չավքինը և Ուիլիամսը տալիս են ծնողների 6-աստիճան դասակարգում. ծնող՝ որպես հանդիսատես, մասնավոր ուսուցիչ տնային ուսուցման և դասապատրաստման համար, ծրագրին աջակցող, համադասարանցի, իրավապաշտպան և որոշումներ կայացնող:[7] Ջ. Էփստեյնն իր հերթին առաջարկում է ծնողական ներգրավվածության հինգ տեսակ՝ առաջադիմության հաշվետվություն, հատուկ իրադարձություններ, ծնողական կրթություն, ծնողական դասավանդում և կրթության ոլորտում որոշումների կայացում:[8] Ծնողական ներգրավվածությունը հատկանշական է երեխայի նախադպրոցական տարիքում, երբ նա ավելի շատ ունի ծնողի հո-

[5] http://www.sbsbf.am/:

[6] Epstein, Joyce L.; Sanders, Mavis G.; Simon, Beth S.; Salinas, Karen Clark; Jansorn, Natalie Rodriguez; Van Voorhis, Frances L. School, Family, and Community Partnerships: Your Handbook for Action. Second Edition, 2002.

[7] Chavkin, N. F., & Williams, D. L. Critical issues in teacher training for parent involvement. Educational Horizons, 1998.

[8] Epstein, J.L., School and family partnerships. In M. Alkin (Ed.), Encyclopedia of educational research, New York: 1992. MacMillan.

գածության, աջակցության և ներգրավվածության կարիքը: Ծնողը՝ որպես առաջին ուսուցիչ և խորհրդատու, կենտրոնական դեր է խաղում երեխայի կյանքում:

Ծնողների ներգրավվածությունից բացի մասնագիտական գրականության մեջ հաճախ ենք հանդիպում «մանկավարժական լուսավորություն» հասկացությանը: Ա. Վ. Մարկովան և Լ. Բեկկերը լուսավորությունը մեկնաբանում են որպես մշակույթի պրոպագանդման կամ տարածման գործընթաց, որը ենթադրում է տեղեկատվության ընկալման համեմատաբար ազատ և անկախ ընտրություն:[9] Ծնողների մանկավարժական լուսավորություն ասելով՝ մեծապես հասկանում ենք երեխայի գործունեության և զարգացման վերաբերյալ ծնողին տրամադրվող տեղեկատվություն: Վերաբերյալ հեղինակներն առանձնացնում են ծնողների մանկավարժական իրազեկության մի քանի հիմնական սկզբունքներ, հաշվի առնելով՝

- ✓ ուսուցիչ-ծնող, ծնող-երեխա փոխհարաբերությունների հումանիստական բնույթը,
- ✓ լուսավորության վերաբերյալ անհատական մոտեցումը,
- ✓ ուսումնական նյութի յուրացման հարցում անհատական խթանման սկզբունքը,
- ✓ մանկավարժների և ծնողների համագործակցության սկզբունքը:[10]

Ծնողական լուսավորությանն ուղղված ծրագրերը միտված են օգնելու ծնողներին՝ որպես երեխայի առաջնային կրթողների՝ լավագույնս զարգացնելու ծնողական հմտությունները՝ իրազեկելով այն ուղիները, որոնցով վերջիններս կարող են ներգրավվել երեխաների կրթական զարգացման գործընթացներում: Ոլորտի հետազոտողներ Հանոնի և Ուեյբերգերի համոզմամբ «*ընտանեկան լուսավորություն*» հասկացությունը՝ որպես նկարագրության եզրույթ, առաջին անգամ կիրառվել է ոլորտի փորձագետ Թեյլորի կողմից Ամերիկայի Միացյալ Նահանգներում:[11] Թեյլորի դիտարկմամբ «դպրոցական կյանքի և գործունեության ձախողման սերմերը ցանվում են ընտանիքում, և որևէ մեկը չի կարող արմատախիլ անել դպրոցում ծագած խնդիրները՝ միայն դպրոցի հետ աշխատելով»: Հետազոտությունները ցույց են տալիս, որ շեշտը պետք է դնել ոչ միայն ֆորմալ կրթության, այլև ոչ ֆորմալ կրթության վրա՝ հաշվի առնելով առօրյա գործողությունները, տվյալ մշակույթը, համայնքը և լեզուն: Ընտրանքներին ուղղված ծրագրերը միտված են խրախուսելու ընտանիքներին կերտելու համագործակցային ուսուցում և այնպիսի ծրագրեր, որոնք ապահովում են «բացահայտ և ճշգրիտ վերջնարդյունքներ»: Ընտանեկան լուսավորությանն ուղղված մոտեցումները պետք է միջսերնդային ուսումնառության հնարավորություն ընձեռեն՝ նպաստելով ծնողների և երեխաների շարունակական կրթությանը: Ընտանեկան լուսավորության արժեքներն ու փորձառությունը կաղապարում են երեխայի գրագիտության զարգա-

[9] А. В. Маркова, И. Л. Беккер, Педагогическое просвещение родителей по вопросу гуманных взаимоотношений с детьми // Пензенский государственный педагогический университет им. В. Г. Белинского кафедра педагогики, Сектор молодых ученыь, N3 (7) 2007, стр. 217.

[10] А. В. Маркова, И. Л. Беккер, Педагогическое просвещение родителей по вопросу гуманных взаимоотношений с детьми // Пензенский государственный педагогический университет им. В. Г. Белинского кафедра педагогики, Сектор молодых ученыь, N3 (7) 2007, стр. 218.

[11] Taylor, N. (2006). What do we know about involving children and young people in family law decision making? A research update. Australian Journal of Family Law, 20, 154–178.

ցումը հնարավորությունների, ճանաչողության և փոխազդեցության հայեցակետից:[12] Այսինքն՝ ընտանիքիները ցուցաբերում են լուսավորության որոշակի վարքագծեր, որոնք կարող են սահմանվել որպես գրագիտության և լուսավորության ընկալման հնարավորություններ:

Ծնողների մանկավարժական իրազեկության հարցերը քննել են նաև ռուս գիտնականներ Տ. Ա. Դանիլինան, Ի. Ա. Մերկուլը, Ա. Վ. Մինինան, Ս. Ս. Պիջուկովան, Ջ. Վ. Պոզդնյակովան և այլք: Ժամանակակից գիտնականների հայեցակետից ծնողների մանկավարժական իրազեկությունը լայն մշակութային հասկացություն է, որը կազմում է մանկավարժական մշակույթի մի մասը: Այն ծնողների տեսական և գործնական պատրաստակամությունն է՝ ներդնելու ու իրականացնելու կրթական գործողություններ, հասկանալու երեխաների պահանջմունքները՝ ստեղծելով բավարարվածության պայմաններ նրանց համար:[13]

Փաստորեն, ծնողների մանկավարժական գիտելիքների և կարողությունների ձևավորման համատեքստում իրազեկության, տարատեսակ մոտեցումների և ինքնագնահատման տեսանկյունից համագոյակցում են հուզական, ճանաչողական և հաղորդակցական բաղադրիչները:

[12] Hannon, P. (1995) *Literacy, home and school: research and practice in teaching literacy with parents.* London: Falmer Press. 179pp.

[13] Arnautova, E. P. (2012). Planning of the work of the preschool educational institution with the family. Management of preschool educational institution, 4, 12-18.

Юлия Мкртчян
Аспирант кафедры Педагогики и методики преподавания иностранных языков Ереванского государственного университета языков и социальных наук имени В. Я. Брюсова

ПЕДАГОГИЧЕСКОЕ ПРОСВЕЩЕНИЕ РОДИТЕЛЕЙ И ВОВЛЕЧЕНИЕ СЕМЬИ В КОНТЕКСТ СОВРЕМЕННЫХ ТЕОРИЙ

Развитие личности - сложный процесс, который рассматривается через призму родительских отношений, их влияния и действия. Профессионалы в области образования в основном рассматривают просвещение как базовый навык самореализации и удовлетворения в сфере личной и общественной жизни. Исследования показывают, что родители нуждаются в педагогическом образовании. В связи с этим, особое внимание будет уделено программам родительского просвещения, которые направлены на повышение уровня образовательной осведомленности родителей.

Ключевые слова: педагогическая осведомленность родителей, просвещение, вовлечение, семья, воспитание, образование.

Yulia Mkrtchyan
PhD Student at the Faculty of Pedagogy and Language Teaching Methodology, Yerevan Brusov State University of Languages and Social Sciences

PEDAGOGICAL EDUCATION OF PARENTS AND FAMILY INVOLVEMENT IN THE CONTEXT OF CONTEMPORARY THEORIES

Personality development is a complex process that is seen through the prism of parental attitude, influence and actions. The experts of the educational sphere of study have largely viewed the term of “enlightenment” as a basic skill of self-realization and satisfaction in personal and social life spheres. Research shows that parents are in need of pedagogical education. In this regard, special attention will be paid to the programs of parental education, which are aimed at raising the level of educational awareness of parents.

Key words: pedagogical education of parents, enlightenment, involvement, family, upbringing, education.